ՀՀ Լոռու մարզի Սպիտակ խոշորացված համայնքի

Ղեկավարին պարոն Քաջայր Նիկողոսյանին

Հովհաննես Նազարյանի ներկայացուցիչ Անահիտ Ալոյանից

/ք□ Վանաձոր, Տարոն-4 Մեք□, 2□ 14 վ, բն□ 13/

ԴԻՄՈՒՄ՝

Հարգելի պարոն Նիկողոսյան,

ՀՀ Վարչական դատարանի 28□11□2023 թվականի թիվ ՎԴ6/0149/05/20 վճռով բավարարվել է իմ հայցը և վճռվել է՝ «Ոչ իրավաչափ է ճանաչվել ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերումէ նաև իրավաչափանձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է համապատասխան համայնքը՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների /տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար/ դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված դեպքում վնասի հատուցումը կատարվոիմ է համապասխան համայքային բյուջեի միջոցների հաշվին:

Ելնելով վերոգրյալներից խնդրում ե մ Ձեզ ընդունել որոշում թիվ ՎԴ6/0149/05/20 վարչական գործով հրապարակված վճռով հաստատված Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեակավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում Հովհաննես Նազարյանին պատճառված 3 000 000 ՀՀ դրամ հատուցել մասին և գումարը վճարել Հովհաննես Նազարյանին որպես վարչարարությամբ պատճառված վնաս:

Կից ներկայացնում եմ՝

1□Անձնագրերի պատճեները

2□Լիազորագիրը

3□Փաստաբանական արտոնագրիս պատճենը

4□Դատարանի վճռի պատճենը

Դիմող՝ Հովհաննես Նազարյանի ներկայացուցիչ

Անահիտ Ալոյան

ԼԻԱԶՈՐԳԻՐ

Ք. Վանաձոր 04.08□2023 թ.

Ես՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանս, ծնված՝ 15□03□1953 թվականին
Հաշվառված՝ Լոռի-Սպիտակ, գ□ Մեծ Պարնի, 6 փողոց, տնակ 4
Անձնագիր՝ AL 0342576, տրված՝ 18□07□2023 թ□, 052-ի կողմից,

Լիազորում եմ՝

Փաստաբան Անահիտ Ալբերտի Ալոյանին, ծնված՝ 10□01□1961 թվականին
Հաշվառված՝ ք□ Վանաձոր, Տարոն-4 Մեք□, շ□ 14 վ, բն□ 13
Անձնագիր՝ AL 0335080, տրված՝ 13□07□2023 թ□, 018-ից, արտոնագիր՝ 207

Իմ փոխարեն հանդես ՀՀ Լոռո մարզի Սպիտակի համայնքապետարանում, իմ ա նունից դիմումներ ներկայացնել, ստորագրել իմ փոխարեն, ստանալ իմ վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, մասնավորապես դիմում ներկայացնել իմ անունից ՀՀ Վարչական դատարանի թիվ ՎԴ6/0149/05/20 վճռով փոխհատուցում ստանալու մասին, ինչպես նաև կատարել սույն լիազորագրի շրջանակներում ցանկացած այլ գործողություն:

Լիազորագիրը տրվում է երեք տարի ժամկետով:

Լիազորող՝ Հովհաննես Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր N 207

ԱՆԱՀԻՏ ԱԼՈՅԱՆ

Лицензия N 207
на право адвокатской деятельности

АНАИТ АЛОЯН

License N 207
of advocate's activity

ANAHIT ALOYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

Նախագահ՝ Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ
Председатель Р. СААКЯН
President R. SAHAKYAN

01.10.2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ԱԼՈՅԱՆ

ՍԵՌԸ
Ի

ԱՆՈՒՆԸ
ԱՆԱՀԻՏ ԱԼԲԵՐՏԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
10.01.1961

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
13.07.2023

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
13.07.2033

ՈՒՄԻ ԿՈԴԱՄԻՑ
018

ԱՆՁՆԱԳԻՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE	COUNTRY CODE	PASSPORT No
P	ARM	AL0335080

SURNAME(S)
ALOYAN

NAME
ANAHIT

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
10 JAN 1961

PERSONAL No.

SEX
F

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
13 JUL 2023

DATE OF EXPIRY
13 JUL 2033

AUTHORITY
018

P<ARMALOYAN<<ANAHIT<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AL0335080 2ARM6101105F3307135<<<<<<<<<<<<<<<06

4

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL

16.08.2024

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS 5

[illegible]
[illegible] 4 մկ. 14 շ., 13 բն.
18 01 1996 թ.

AL 0335080

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ՆԱԶԱՐՅԱՆ

ՍԵՌԸ
Ա

ԱՆՈՒՆԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՋԱՆԻԿԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

ԾՆՎԵԼ Է
15.03.1953

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
18.07.2023

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
18.07.2033

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
052

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No
AL0342576

SURNAME(S)
NAZARYAN

NAME
HOVHANNES

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
15 MAR 1953

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
18 JUL 2023

DATE OF EXPIRY
18 JUL 2033

AUTHORITY
052

```
P<ARMNAZARYAN<<HOVHANNES<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AL03425760ARM5303153M3307180<<<<<<<<<<<<<<04
```

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

[illegible]
[illegible]
13 . 0[illegible] 1982թ

AL 0342576

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական գործ թիվ ՎԴ6/0149/05/20

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«28» նոյեմբերի 2023 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
(այսուհետ նաև՝ Դատարան)՝

նախագահությամբ՝	դատավոր	Միեր Պետրոսյանի,
քարտուղարությամբ՝		Մանե Հարությունյանի,
		Լուսինե Պետրոսյանի,
		Արսինե Գրիգորյանի,
մասնակցությամբ՝	**հայցվոր**	**Հովհաննես Նազարյանի,** (անձնագիր՝ AL 0342576, տրված 18.07.2023թ. 052-ի կողմից, հասցե՝ Լոռու մարզ, գյուղ Մեծ Պարնի 6 փ., 4),
	ներկայացուցիչ	Անահիտ Ալոյանի, (փաստաբանական վկայական՝ 207, հիմք՝ 2.11.2019 և 10.10.2022 թվականների լիազորագրեր),

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Հովհաննես Նազարյանի ընդդեմ Լոռու մարզի Սպիտակ համայնքի (հասցե՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան փող., 7 շենք)՝ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հովհաննես Նազարյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Մեծ Պարնիի համայնքապետարանի՝ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ալավերդյան) 11.08.2020 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ալավերդյան) 10.11.2020 թվականի որոշմամբ Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքապետրանը փոխարինվել է պատշաճ պատասխանող Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ալավերդյան) 10.11.2020 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին, Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների /բնակելի տների/ հատկացման հարցերով հանձնաժողովը և ՀՀ Լոռու մարզպետարանը դատավարության մեջ ներգրավել է որպես երրորդ անձ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ալավերդյան) 10.11.2020 թվականի որոշմամբ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարից պահանջվել են ապացույցներ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ալավերդյան) 10.03.2021 թվականի որոշմամբ Օֆիկ, Մարինե, Տաթևիկ և Արտուշ Նազարյանները դատավարության մեջ ներգրավել է որպես երրորդ անձ:

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 18.02.2022 թվականի թիվ ԲԴԽ-21-Ո-31 որոշմամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանի լիազորությունները 2022 թվականի փետրվարի 21-ից համարվել է դադարած, ինչի կապակցությամբ թիվ ՎԴ6/0149/05/20 վարչական գործը 07.04.2022 թվականին մակագրվել է դատավոր Միեր Պետրոսյանին՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

Դատարանի 06.05.2022 թվականի որոշմամբ վարչական գործն ընդունվել է վարույթ և նախնական դատական նիստ է հրավիրվել 07.07.2022 թվականին:

Դատարանի 07.07.2022 թվականի որոշմամբ Մեծ Պարնի համայնքի ղեկավարից պահանջվել են ապացույցներ:

Դատարանի 21.12.2022 թվականի որոշմամբ Մեծ Պարնի համայնքի ղեկավարը փոխարինվել է Լոռու մարզի Սպիտակ համայնքով:

Դատարանի 21.12.2022 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների

բնակելի տների/ հատկացման հարցերով հանձնաժողովը, ՀՀ Լոռու մարզպետարանը, Օֆիկ, Մարինե, Տաթևիկ և Արտուշ Նազարյանները հանվել են դատավարության մասնակիցների կազմից:

Դատարանի 21.12.2022 թվականի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության 09.08.2023 թվականին:

Դատարանի 14.09.2023 թվականի որոշմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից պահանջվել են ապացույցներ:

Դատարանի 09.08.2023 թվականի արձանագրային որոշմամբ գործի քննությունը հետաձգվել է և նշանակվել է 07.11.2023 թվականին:

Դատարանը 07.11.2023 թվականին գործի քննությունը համարել է ավարտված և գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր է հայտարարել 28.11.2023 թվականը:

2.Հայցվորի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Հայցվորը ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով հայտնել է, որ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում մինչև երկրաշարժը ունեցել է սեփական տուն՝ 40 քմ մակերեսով, երկրաշարժի հետևանքով տունը ամբողջովին քանդվել է, նրա, ընտանիքին տրամադրվել էվագոն-տնակ:

Հայտնել է, որ երկրաշարժից հետո որպես անօթևան մնացած ընտանիք հաշվառվել է Մեծ Պարնի համայնքի եիկրաշարժի հետևանքով անօթևան դարձած ընտանիքների ցուցակում:

Հայտնել է, որ համոզված է եղել որ ինքը բնակարանների կարիքավորների հերթացուցակում և քանի որ բազմրցս գյուղի համայնքապետերին հարցրել է, թե ինչ կա բնակարան հատկացնելու վերաբերյալ և ստացել է պատասխան, որ ամեն ինչ նորմալ է, այս պահին դեռ շինարարություն չկա, դեռ պետք է սպասի, երբ շինարարությունը սկսվի, իր բնակարանի հարցը կլուծվի: Դիմել է Մեծ Պարնիի գյուղապետարան և 26.11.2019 թվականին ստացել է համայնքի ղեկավար Գ Պալյանի պատասխանը, որ ի պատասխան հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 13 11.2008թ. թիվ 1337-Ն որոշման կարգի 3-րդ կետի համայնքի ղեկավարի կողմից հաստատված աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման նպատակով, անհրաժեշտության դեպքում ցուցակներում համապատասխան փոփոխությունից հետո ցուցակները ՀՀ քաղաքաշինական նախարարություն պետք է ներկայացվեր մինչև 2008թ. դեկտեմբերի 20-ը. ուստի համայնքի ղեկավարն այլևս իրավասու չէ ընդգրկելու երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթուցուցակում:

Հայտնել է, որ դիմել է նաև ՀՀ ազգային արխրվի Լոռու մարզային մասնաճյուղ և արխիվից ստացել է Մեծ Պարնի գյուղի 2005 և 2007թթ ցուցակները, որտեղ իր անունը նշված է որպես անօթևան ընտանիք: Այնուհետև դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային պայմանների կարիք ունեցող անձանց ցուցակում իրեն և իր ընտանիքը հաշվառելու համար և 25.12.2019թ. փոստային ծառայության միջոցով ստացել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալի թիվ 13/7786-2019 գրությունը հասցեագրված Հովհաննես Նազարյանին, համաձայն որի հայտնել է, որ աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի

հետևանքով անօթևան մնացած, պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման հետ կապված հարցերը կարգավորվել են ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի 1337-Ն որոշմամբ հաստատված կարգով: Կարգի դրույթների համաձայն հերթացուցակում քաղաքացիների հաշվառումն իրականացրել է համապատասխան համայնքի ղեկավարը նրաց կողմից միչև 2008թ. դեկտեմբերի 15-ը ներկայացված դիմումների և կից փաստաթղթերի քննարկման արդյունքներով ընդունված որոշման հիման վրա, ընդ որում, կարգի 22-րդ կետի համաձայն մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը սահմանված կարգով դիմում ներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտականությունների կատարումը հւսմարվել է դադարեցված: Սահմանված վերջնաժամկետից հետո քաղաքացիներին հերթացուցակում հաշվառելու իրավասություն որևէ իրավական ակտով որևէ մարմնի վերապահված չէ, և դիմումում բարձրացված հարցը ենթակա է կարգավորման դատական կարգով:

Հայտնել է, որ Հովհաննես Նագարյանի ընտանիքը հերթացուցակից հանվել է առանց նրան տեղեկացնելու, դեռ ավելին անընդհատ հույսեր են ներշնչվել, որ դեռ ժամանակը չէ, պետք է սպասի, ուստի Հովհաննես Նազարյանի անունից 02.03.2020 թվականին վարչական բողոք եմ ներկայացրել Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքապետին և խնդրել վերականգնել 15.12 2008թ. դրությամբ Հովհաննես Նազարյանի ընտանիքի բնակարան ստանալու իրավունքը որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիք:

Վարչական բողոքից անցել է ավելի քան երկու ամիս Մեծ Պարնիի համայնքապետը դեռ պատասխան չէր տվել վարչական բողոքին, միայն վերջերս առձեռն հանձնել է մի գրություն թվագրված 10.06.2020 թվական, թիվ ՄՊ159/2020 համարով նույնաբովանդակ նախորդ դիմումների պատասխաններին:

Հայտնել է, որ Հովհաննես Նազարյանը 2005 թվականին ընդգրկվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած Մեծ Պարնիի համայնքի ընտանիքների հերթացուցակում, հերթ համար 135, ընտանիքի չորս անձով, 2007 թվականին ընդգրկվել է երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած Մեծ Պարնիի համայնքի ընտանիքների ցուցակում, հերթ համար 70, իսկ Մեծ Պարնիի համայնքի ղեկավարի կողմից 15.12.2008 թվականի հաստատված հերթացուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չի հաշվառվել:

Հայտնել է, որ 26.11.2019 թվականին դիմում է հղել Մեծ Պարնիի համայնքի ղեկավարին և խնդրել իր ընտանիքը ընդգրկե Մեծ Պարնիի հերթացուցակում և ստացել պատասխան, որ ցուցակները ՀՀ քաղաքաշինության նախարարություն պետք է ներկայացվեր մինչև 2008 թվականի դեկտեմբերի 20-ը:

Հայտնել է, որ Հովհաննես Նազարյանի ընտանիքը հաշվառումից հանվել է առանց նրան տեղեկացնելու, հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր առարկություններն ու հիմնավորումները:

Գտնում է, որ Հովհաննես Նազարյանի ընտանիքը հերթացուցակից հանելու որևէ հանգամանք չի եղել, իսկ կարգով նախատեսված քաղաքացիներին բնակարանային կարիքավորների հաշվառումից հանելու հիմքերի ցանկը սպառիչ է, այս ամենից հետևում է, որ արգելվում է քաղաքացիներին հանել հերթացուցակից այլ պատճառներով, որը նշված կարգով: Մեծ Պարնիի համայնքի ղեկավարը իր գրություններից մեկում նշել է, որ Հովհաննե

Նազարյանը ընտանիքը հերթացուցակից հանվել է, քանի որ 2005 թվականից ամբողջ ընտանիքով բացակայել են հանրապետությունից:

Հայտնել է, որ Հովհաննես Նազարյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետությունից այդ տարիներին մշտապես չի բացակայել, հակառակ դեպքում նրանց ընտանիքը ընդգրկված չէր լինի Մեծ Պահնիի 2005 և 2007 թվականների հերթացուցակում: Բացի այդ, Հովհաննես Նազարյանը ժամանակ առ ժամանակ բացակայել է հանրապետությունից դրսում աշխատելու պատճառով, բայց նա 2008 թվականին եղել է Մեծ Պարնի գյուղում և եթե նույնիսկ Հովհաննես Նազարյանը 2008 թվականի նոր հերթացուցակի կազմման ժամանակ, ըստ համայնքապետի. գյուղում չի եղել, համենայն դեպս պետք է Հովհաննես Նազարյանի ընտանիքը հաշվառումից հանելու համար Մեծ Պարնիի համայնքի ղեկավարը հրավիրեր նիստ, արձանագրեր, որ Հովհաննես Նազարյանը գյուղում չէ, իսկ եթե գյուղում է եղել, նրան տեղյակ պահեր իր հարցի քննարկման մասին, ապա իրականացներ վարչական վարույթ, ընդուներ համապատասխան որոշում, սակայն Մեծ Պարնիի համայնքի ղեկավարը դրսևորելով անգործություն, չի կատարել վերը նշված գործողությունը, այսինքն չի իրականացրել վարչական վարույթ Հովհաննես Նազարյանի ընտանիքը եղել է Մեծ Պարնիի և 2005 թվականի և 2007 թվականի հերթացուցակում, իսկ Մեծ Պարնիի ղեկավարի կողմից 15.12.2008 թվականի հաստատված Մեծ Պարնիի պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը առանց հիմքի հանվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակից առանց կարգով սահմանված որևէ հիմքի առկայության և առանվ կարգով սահմանված նիստ հրավիրելու և որոշում կայացնելու:

Գտնում է, որ Մեծ Պարնի համայնքի ղեկավարի գործողությունները համարվում են կատարմամբ իրենց սպառած, քանի որ կարգի 22-րդ կետի համաձայն բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են եղել հաստատման համայնքի ղեկավարի կողմից մինչև 15.12.2008 թվականը:

Որպես իրավական հիմք նշել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը, նույն կարգի 11-րդ, 12-րդ, 17-րդ և 18-րդ կետը:

Ելնելով վերը խնդրել է ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարեի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևանն մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Երջանիկի Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ:

<u>3. Պատասխանողի առարկությունները և դիրքորոշումը.</u>

Պատասխանողը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Պատասխանողը, պատշաճ ծանուցված լինելով դատաքննության վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել դատաքննությանը, Դատարանը ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով, 123-րդ հոդվածով, որոշել է գործը քննել պատասխանողի բացակայությամբ:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերու ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում Դատարանը գտնում է, որ սա գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիացիներին բնակարանների արտահ հատկացման կարգի բնակարանային պայմանների ստուգման 10.07.2005 թվականի ա համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ժամանակավոր բնակության տեղը՝ վա տնակը ենթակա չէ բնակվելու:

2. Հովհաննես Նազարյանի կողմից Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետին ուղղ 14.08.2005 թվականի դիմումով խնդրել է ընդգրկել իրեն պետական աջակցությ կատարվող անհատական շինարարության ծրագրերի հերթացուցակում:

3. Մեծ Պարնիի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքների 2 թվականի ցուցակի քաղվածքի համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ընտան զբաղեցնում է 135 հերթահամարը:

4. Մեծ Պարնիի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքների 2 թվականի ցուցակի քաղվածքի համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ընտան զբաղեցնում է 70 հերթահամարը:

5. ՀՀ Լոռու մարզի Մեծ Պանրնու համայնքի ղեկավարը 10.06.2020 թվականի ՄՊ159-2020 գրությամբ հայտնել է, որ Հովհաննես Նազարյանը 2005 և 2007թթ. ընդգրվ եղել Մեծ Պարնի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակ առանց հատուկ դիմումի և միջնորդագրի, սակայն ելնելով 2008 թվականի նոյեմբերի 13-ի 1337-Ն որոշման պահանջներից՝ մասնավորապես բնակարանային ապահովման ծրա շրջանակներում բնակարանային պայմանների բարելավում ունեն այն քաղաքացիները, որ տները երկրաշարժի հետևանքով քանվել են կամ քանդման ենթակա են, որը հաստատվ արխիվային տեղեկանքով՝ որտեղ նշվում է բնակարան ունենալու փաստը կամ 4-րդ կա վթարային լինելու փաստը՝ հաստատված համապատասխան մասնագիտա եզրակացության հիման վրա: 2008 թվականից շատ առաջ Հովհաննես Նազարյ ընտանիքով բացակայել է գյուղից և այժմ էլ գտնվում է ՌԴ-ում անհայտ հասցեո բնականաբար վերոհիշյալ պահանջվող փաստաթղթերը չէր կարող ներկայացնել և ներկայացրել, ուստի այդ պատճառով էլ չի ընդգրկվել անօթևանների ցուցակում:

6. ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 04.10. թվականի թիվ 5/3432 գրության համաձայն՝ 2005 թվականի հունվարի 1-ին մինչև թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում Հովհա Երջաինիկի Նազարյանի սահմանահատումների վերաբերյալ տվյալներ սահման էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում հաշվառված չեն: (...):

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով հայցվորի ներկայացուցչի փաստարկները, հետազոտելով և գնահաս գործով ձեռք բերված ապացույցները, Դատարանը հանգեց հետևյալին.

Դիմելով դատարան՝ Հովհաննես Նազարյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչե Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղա

բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը /անգործությունը/:

Այսինքն, հայցապահանջը դատարան է ներկայացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցատեսակի շրջանակներում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության իրավաչափությունը որոշվում է այդ ակտի գործողության ժամանակ կամ այդ գործողության կատարման կամ անգործության դրսևորման ժամանակ գործած օրենքների հիման վրա:

ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատվել է «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ):

Նույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տները հատկացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների ցուցակների համաձայն՝ դրանցում ընդգրկված անձանց հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզպետներին՝

1) ստեղծել աշխատանքային խմբեր սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման ցուցակների ստուգման նպատակով և անհրաժեշտության դեպքում առաջարկել համայնքների ղեկավարներին համապատասխան փոփոխություններ կատարել ցուցակներում.

2) ապահովել սույն կետի 1-ին ենթակետում նշված ցուցակների ստուգման արդյունքներով դրանք ներկայացնելը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 20-ը:

Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով սահմանվում են աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցության միջոցով իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի (այսուհետ՝ բնակարանային ապահովման ծրագիր) շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային ապահովության առաջնահերթության որոշման չափանիշները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և տվյալ բնակավայրում մշտական բնակություն հաստատած այն անձինք ու նրանց ընտանիքի անդամները, որոնց բնակելի տները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ ենթակա են քանդման:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառման ժամանակ ընտանիքի կազմը որոշվում է երկրաշարժի պահին տվյալ բնակավայրի ծխամատյանում գրանցված, ինչպես նաև հաշվառման պահին ընտանիքի փաստացի անդամների թվով՝ որպես մեկ ընտանիք:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառումն իրականացնում է նրանց մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին: Դիմումում նշվում են ընտանիքի անդամների, այդ թվում՝ ժամանակավոր բացակայողների թիվը, ժամանակավոր բնակության վայրը:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ դիմումին կից ներկայացվում են՝

1) ընտանիքի անդամների անձնագրերի (անչափահաս անդամների՝ ծննդյան վկայականների) պատճենները.

2) ամուսնության (ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության) վկայականների պատճենները.

3) 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմի մասին քաղվածք՝ ծխամատյանից՝ ծխամատյանի բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք.

4) ընտանիքի մահացած անդամների մահվան վկայականների պատճենները.

5) անավարտ շինարարության բնակելի տան և տնամերձ հողամասի սեփականության վկայականի պատճենները.

6) անապահովության համակարգում ընդգրկվածության և ընտանիքի անապահովության մեծության բալային ցուցանիշի մասին տեղեկանք.

7) սեփականության իրավունքով պատկանող երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բնակելի տան դիմաց նախկին Հայխնայբանկում բացված ավանդային հաշվի գրքույկի պատճենը:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ դիմումում նշված տեղեկատվությունն ու դիմումում ներկայացված քաղաքացիների բնակարանային պայմաններն ստուգում է համայնքի ղեկավարի կողմից ստեղծված բնակարանային հարցերի հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով): Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի:

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիների դիմումները, կից ներկայացված փաստաթղթերի հետ միասին, մեկամսյա ժամկետում քննության են առնվում համայնքի ղեկավարի կողմից (անհրաժեշտության դեպքում՝ դիմողի ներկայությամբ) և քաղաքացուն հաշվառման վերցնելու վերաբերյալ ընդունվում է որոշում՝ հաշվի առնելով հանձնաժողովի կարծիքը:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձինք, ովքեր՝

1) ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն՝ բացառությամբ նախորդ տարիներին պետական միջոցների հաշվին առանց վարկային միջոցների ներգրավմամբ շինարարությունն սկսած անավարտ շինարարության բնակելի տների.

2) նախորդ տարիներին իրականացված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում օգտվել են բնակարանային պայմանների բարելավման համար իրենց իրավունքից.

3) վերջին հինգ տարիների ընթացքում օտարել են բնակարան (բնակելի տուն), որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել իրենց բնակարանային պայմանները.

4) երկրաշարժից հետո հրաժարվել են բնակարանի (բնակելի տան) ժառանգությունից կամ ժառանգության բացման օրվանից սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել բնակարանի (բնակելի տան) ժառանգման իրավունքի վկայականն ստանալու համար.

5) սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բնակելի տան դիմաց նախկին Հայխնայբանկում բացված իրենց ավանդային հաշիվներին փոխանցված փոխհատուցման միջոցներով կառուցել են բնակելի տուն:

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ հաշվառման վերցված քաղաքացիները, ինչպես նաև այն քաղաքացիները, որոնց մերժել են, մեկշաբաթյա ժամկետում դրա մասին գրավոր իրազեկվում են: Համայնքի ղեկավարի որոշման հետ չհամաձայնվելու դեպքում քաղաքացիները կարող են այն բողոքարկել դատարան:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները հաշվառումից հանվում են, եթե՝

1) հաշվառման վերցված անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, որի կապակցությամբ վերացել են հաշվառման մեջ գտնվելու հիմքերը.

2) հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր.

3) բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման պահին ի հայտ է եկել բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հերթացուցակում նրանց հաշվառելու չափանիշների անհամապատասխանություն.

4) առաջ է եկել սույն կարգի 11-րդ կետով սահմանված դիմումի մերժման որևէ հիմք:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին հաշվառումից հանում է համապատասխան համայնքի ղեկավարը: Ընդ որում, հաշվառումից հանելու հարցի առաջացման դեպքում քաղաքացիները հրավիրվում են այն նիստին, որտեղ քննարկվում է նրանց հաշվառումից հանելու հարցը: Առանց հարգելի պատճառների նիստին քաղաքացիների չներկայանալը հարցի լուծման համար խոչընդոտ չի հանդիսանում: Ընդունված որոշման մասին 5-օրյա ժամկետում քաղաքացիներին հայտնվում է գրավոր:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի բնակարանային պայմանների ստուգման 10.07.2005 թվականի ակտի համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ժամանակավոր բնակության տեղը՝ վագոն տնակը ենթակա չէ բնակվելու, իսկ 14.08.2005 թվականի դիմումով Հովհաննես Նազարյան խնդրել է Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետին ընդրկգել իրեն պետական աջակցությամբ կատարվող անհատական շինարարության ծրագրերի հերթացուցակում:

Մեծ Պարնիի եկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքների 2005 թվականի ցուցակի քաղվածքի համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ընտանիքը զբաղեցնում է 135 հերթահամարը, իսկ Մեծ Պարնիի եկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքների 2007 թվականի ցուցակի քաղվածքի համաձայն՝ Հովհաննես Երջանիկի Նազարյանի ընտանիքը զբաղեցնում է 70 հերթահամարը:

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի ղեկավարը 10.06.2020 թվականի թիվ ՄՊ159-2020 գրությամբ հատյնել է, որ Հովհաննես Նազարյանը 2005 և 2007թթ. ընդգրված է եղել Մեծ Պարնի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում, առանց հատուկ դիմումի և միջնորդագրի, սակայն ելնելով 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման պահանջներից՝ մասնավորապես բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավում ունեն այն քաղաքացիները, որոնց տները երկրաշարժի հետևանքով քանվել է կամ քանդման ենթակա է, որը հաստատվում է արխիվային տեղեկանքով՝ որտեղ նշվում է բնակարան ունենալու փաստը կամ 4-րդ կարգի վթարային լինելու փաստը՝ հաստատված համապատասխան մասնագիտական եզրակացության հիման վրա, 2008 թվականից շատ առաջ Հովհաննես Նազարյանը ընտանիքով բացակայել է գյուղից և այժմ էլ գտնվում է ՌԴ-ում անհայտ հասցեով և բնականաբար վերոհիշյալ պահանջվող փաստաթղթերը չէր կարող ներկայացնել և չի էլ ներկայացրել, ուստի այդ պատճառով էլ չի ընդգրկվել անօթևանների ցուցակում:

Վերը նշված գրությունից հետևում է, որ Հովհաննես Նազարյանի ընտանիքը չի ընդգրկվել հերթացուցակում, քանի որ Հովհաննես Նազարյանը 2008 թվականից շատ առաջ ընտանիքով բացակայել է գյուղից և այժմ էլ գտնվում է ՌԴ-ում անհայտ հասցեով:

Դատարանը գտնում է, որ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարը Հովհաննես Նազարյանի ընտանիքը հաշվառման չի վերցրել օրենքի պահանջների խախտմամբ, քանի որ նրան հաշվառման չվերցնելու ժամանակ համայնքի ղեկավարը պետք է Կարգի 18-րդ կետի համաձայն հրավիրեր հայցվորին նիստին, որտեղ քննարկվում էր նրան հաշվառումից հանելու հարցը, իսկ ընդունված որոշման մասին 5-օրյա ժամկետում տեղեկացներ գրավոր:

Ընդ որում, Դատարանն արձանագրում է, Մեծ Պարնու համայնքի ղեկավարը 10.06.2020 թվականի թիվ ՄՊ159-2020 գրության մեջ նշված այն հանգամանքը, որ Հովհաննես Նազարյանը ընտանիքով բացակայել է գյուղից և այժմ էլ գտնվում է ՌԴ-ում անհայտ հասցեով, հերքվում է գործում առկա Հովհաննես Նազարյանի կողմից Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետին ուղղված 14.08.2005 թվականի դիմումով, որը վկայում է, որ 2005 թվականի օգոստոսին հայցվորը գտնվել է Մեծ Պարնի համայնքում, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 04.10.2023 թվականի թիվ 5/3432 գրությամբ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և վկայակոչված իրավանորմերի համադրված վերլուծության արդյունքում դատարանը եզրակացնում է, որ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից Հովհաննես Նազարյանի ընտանիքը բնակարանների կարիքավորների ցուցակում չընդգրկելը իրավաչափ չէ և չի բխում ոլորտը կարգավորող, վերը ներկայացված իրավանորմերի պահանջներից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության, առաջնորդվել կամայականության արգելման սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ և դրան հասնելու միջոցները և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել Հովհաննես Նազարյանի բնակարանային հարցը լուծելու համար, որի պատճառով վերջինիս ընտանիքը զրկվել է բնակարանով ապահովման հնարավորությունից:

Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ առկա են բավարար փաստական և իրավական հիմքեր՝ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու համար:

6. Դատական ծախսերի բաշխումը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար(...):

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսը կազմված է միայն պետական տուրքից:

Տվյալ դեպքում, հայցվորը վճարել է պետական տուրքի գումարը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով պատասխանող է հանդիսանում տեղական

ինքնակառավարման մարմինը, որի դեմ կայացվել է վճիռ, Դատարանը գտնում է, որ սույն գործի քննության հետ կապված պետական տուրքի հատուցման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ուժով պետք է կրի Սպիտակ համայնքը, հետևաբար վերջինիս հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի փոխհատուցման ենթակա գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 123-127-րդ հոդվածներով՝ ՀՀ վարչական դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հովհաննես Նազարյանի հայցը բավարարել:

Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Հովհաննես Նազարյանի ընտանիքը հանելու և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Հովհաննես Նազարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը:

2. Սպիտակ համայնքից հօգուտ Հովհաննես Նազարյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես դատական ծախսի փոխհատուցում:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

Վճիռը դատական ծախսերի մասով կամովին չկատարվելու դեպքում կկատարվի դատական արձանագրությունների հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ **ՄՀԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտել «____»_____20_____թվականին:

Դատավոր *Մհեր Պետրոսյան*